ՀԱՅԱՍՏԱՆ - ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ - ԱՇԽԱՐՀ. թվեր և փաստեր

Մաս Ա. «Հերիթըջ Ֆաունդեյշն». տնտեսական ազատության ցուցիչներ

Արա Մարջանյան

Ներածություն

Գաղտնիք չէ, որ այսպես կոչված «քաղաքակիրթ աշխարհում» այս կամ այն երկրի մասին պատկերացումների ձևավորման վրա էականորեն ազդում են մի շարք հայտնի միջազգային կառույցների և ազդեցիկ հասարակական կազմակերպությունների կողմից ամեն տարի հրապարակվող ցուցիչներն ու գնահատականները: Դրանք հաճախ կարող են լրջորեն խթանել կամ, հակառակը՝ արգելակել տվյալ երկրին ուղղորդվող տարաբնույթ ներդրումային հոսքերը և, նույնիսկ, այդ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը ինքնին:

Ավելին, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական գործակալության (*CIA*) և Ազգային հետախուզական խորհրդի (*NIC*) նախաձեռնած՝ երկրների ու ողջ աշխարհի զարգացման սցենարային ծավալուն վերլուծությունների արդյունքում 1990-ական թվականներին ձևավորվեց մի նոր պարադիգմ[1]: Ներկայում այն արմատավորվել է երկրների, ավելի ճշգրիտ՝ ազգ-պետությունների «հաջողակության» գնահատման նոր սանդղակի տեսքով [1, էջ 29]: Համաձայն այդ սանդղակի, կախված հիմնականում այն բանից, թե ինչպիսին են *Համաշխարհային բանկի, ՄԱԿ Զարգացման ծրագրի, «Հերիթըջ Ֆաունդեյշն», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»,*

[1] Այս նախաձեռնության անմիջական արդյունք են NIC Global Trends 2010, 2015 և 2020 հայտնի ուսումնասիրությունները: Միջնորդված արդյունք են «Սցենարներ Ռուսաստանի համար», «Հայաստան 2020» և նմանատիպ այլ նախաձեռնություններն ու գործընթացները:

«Ֆրիդրիխ Հաուս» և այլ կազմակերպությունների կողմից պարբերաբար հրապարակվող տարաբնույթ ցուցիչների արժեքները, այս կամ այն երկիրը ճանաչվում է «ուժեղ» (*Strong states*), «թույլ» (*Weak states*), «ձախողակ» (*Failed states*) կամ «փլուզվող» (*Collapsed states*):

Ուստի, արդարացված և կարևոր են հետևյալ հարցերը. ինչպիսի՞ն է Հայաստանն արդի աշխարհի աչքերում: Ինչպե՞ս է այն գնահատում Հայաստանի երրորդ Հանրապետության զարգացումը: Որո՞նք են արձանագրված ձեռքբերումները և ձախողումները: Ինչպիսի՞ն է պատկերը միտումների տեսանկյունից և համադրության մեջ: Եվ ինչպիսի՞ն է ինքը՝ արդի աշխարհը, թվերով և փաստերով: Որո՞նք են նրա մոտալուտ դիմագիծը ձևավորող ներկայիս միտումները: Ահա այս հարցերին գոնե մասամբ պատասխանելու ցանկությունն է ընկած սույն խորագրի հիմքում:

Խորագրի ստեղծման մյուս դրդապատճառն այն է, որ հայրենական տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ում պարբերաբար հայտնվող միջազգային այս կամ այն տեղեկատուում Հայաստանին վերաբերող տվյալների մասին հակիրճ հաղորդումները, որոշակի հետաքրքրություն առաջացնելով հանդերձ, չեն կարող այն բավարարել քիչ թե շատ հիմնավոր կերպով: Պատճառները բազմաթիվ են և, առաջին հերթին, հիմնականում օբյեկտիվ. ամենօրյա լրահոսքի լարված ռիթմ և բարձր հագեցվածություն, ժամանակային և ծավալային խիստ սահմանափակում և այլն: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում լուրջ ընկալման համար անհրաժեշտ մանրամասների անխուսափելի կորուստ: Կան նաև սուբյեկտիվ հանգամանքներ. միակողմանի լուսաբանում՝ գործին չառնչվող շարժառիթների հետևանքով, կամա թե ակամա աղճատումներ, որոնք նյութը դարձնում են բնագրի ենթատեքստից միանգամայն կտրված: Նաև այս բացը լրացնելուն է ուղղված սույն խորագիրը: Մեր նպատակը հնարավորին չափ ընդգրկուն և անաչառ տեղեկատվությունն է, հրապարակվող տվյալներն ամբողջական ու համարժեք կերպով հայալեզու մամուլ ներմուծելը՝ նրանց հետագա օգտագործման, քննարկման և վերլուծության համար:

Խորագրի նյութերը կներկայացվեն բնագիր աղբյուրների տրամաբանությանը հետևելով, օգտագործվող մեթոդաբանության ու չափորոշիչների մասին անհրաժեշտ ու սեղմ մանրամասներով՝ զերծ բերվող տվյալների կամ օգտագործվող մոտեցումների որևէ գնահատականից (բայց ոչ վերլուծությունից): Ի հավելումն հրատարակված ցուցիչների ամբողջական ցանկերի թարգմանության, առանձին կկատարվի միայն հրապարակված տվյալների որոշ խմբավորում՝ ըստ մեր տարածաշրջանի կամ այլ խմբերի: Նյութերն առավել ցայտուն ներկայացնելու նպատակով կբերվեն համապատասխան գրաֆիկներ որոնք, սովորաբար, բացակայում են բնագիր աղբյուրներում: Բոլոր այն դեպքերում, երբ դա հնարավոր է, տվյալ տարվա ցուցիչների ցանկերից զատ՝ կներկայացվեն նաև վերջին 5-10 տարիներին այդ ցուցիչներին բնորոշ դինամիկան և փոփոխման միտումները:

Վերջում ավելացնենք, որ խորագրի նյութերը պատրաստված են բացառապես բաց մամուլի և ինտերնետային կայքերի տվյալների հիման վրա: Սույն խորագրի նյութերն առավել մանրամասն կտեղակայվեն «Նորավանք» ԳԿՀ ինտերնետային կայքում:

1. «Հերիթըջ Ֆաունդեյշն». տնտեսական ազատության ցուցիչների (ՏԱՑ) տարեկան տեղեկատուները

1973թ. հիմնադրված «Հերիթըջ Ֆաունդեյշն» (ՀՖ, «Ժառանգություն հիմնադրամ») հասարակական կազմակերպությունը[1], ըստ էության լինելով նաև հետազոտական ու կրթական հիմնարկ և ԱՄՆ Հանրապետական կուսակցության մտավորական կադրերի դարբնոց, բավական արագ դարձավ ԱՄՆ կոնսերվատիվ քաղաքական դաշտի ամենաազդեցիկ մտավոր կենտրոններից մեկը: Այն բազմաթիվ և սերտ ու մշտական կապեր ունի ԱՄՆ իշխանական բոլոր թևերում ու խոշոր բիզնեսի ազդեցիկ

[1] **Heritage Foundation.** կայանատեղին՝ Վաշինգտոն, ԱՄՆ:

շրջանակներում: Բնականաբար, այս կապերն առավել ակտիվանում են, երբ կուսակցությունը հաղթում է ԱՄՆ նախագահական ընտրություններում:

ՀՖ-ում կատարվող ուսումնասիրությունների և գնահատականների ընդհանուր գաղափարախոսական ուղղվածությունը թերևս առավել ընդգրկուն նկարագրվում է Ադամ Սմիթի՝ ՀՖ տեղեկատուներում հաճախակի ցիտվող հետևյալ խոսքերով. «Պետությանը լրացուցիչ՝ բարբարոսությունից հարստության բարձր աստիճանի հասնելու համար ավելին հարկավոր չէ, քան խաղաղությունը, ցածր հարկերը և արդարադատության հանդուրժողական կատարումը. մնացյալն իրերի բնականոն ընթացքի արդյունք է» [2, էջ XIII]: Ավելին, ՀՖ սեփական ինտերնետային կայքում տեղակայված յուրօրինակ հավատքի բանաձևում ասվում է. «Մենք հավատում ենք, և չենք վարանում *հավատ* բառի այսպիսի օգտագործումից, անհատական ազատություններին, ազատ ձեռներեցությանը, պետության սահմանափակ դերակատարմանը, ազգային ուժեղ պաշտպանությանը և ամերիկյան ավանդական արժեքներին» [3]:

ՀՖ միջազգային ազդեցությունը սրընթաց սկսեց աճել դեռ Ռ. Ռեյգանի իշխանության օրոք: Իր ներկայիս մակարդակին այն հասավ 1994-95թթ., երբ հիմնականում ավարտվեց աշխարհի տարբեր երկրների տնտեսական ազատության գնահատման ՀՖ մեթոդաբանության մշակումը և 1995-ից սկսեց կանոնավորապես հրատարակվել ՀՖ աշխարհի «Տնտեսական ազատության ցուցիչները» (ՏԱՑ) ամենամյա տեղեկատուն: Այսպես, օրինակ, ՀՖ 2003թ. ՏԱՑ տեղեկատուն [2], կազմված *«Ուոլ Սթրիթ Ջորնալ»* հանրահայտ պարբերականի և *«Դոու Ջոնս»* հայտնի ընկերության հետ համատեղ, ընդգրկում է աշխարհի ավելի քան 150 երկրների տնտեսությունների մասին ամփոփ տեղեկություններ, ինչպես նաև այդ երկրների տնտեսական ազատության ցուցիչների ցանկը:

Համաձայն ՀՖ մեթոդաբանության, տվյալ երկրի տնտեսության ազատության ցուցիչը (տ.ա.ց.) իրենից ներկայացնում է 1.0-ից մինչև 5.0 արժեքային տիրույթում

ընկած թվային ինդեքս (ցուցիչ)։ Որքան փոքր է գնահատվում տ.ա.ց. արժեքը, այնքան ազատ է տվյալ երկրի տնտեսական դաշտն ըստ ՀՖ փորձագետների։ Տ.ա.ց.-ը հաշվարկվում է տվյալ երկրի տնտեսության ազատությունը բնութագրող հետևյալ 10 բաղադրիչ գործոնների թվային արժեքների միջինացմամբ.

1. առևտրային քաղաքականություն
2. կառավարության ֆինանսական ծախքեր
3. պետական միջամտում տնտեսությանը
4. դրամային քաղաքականություն
5. դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ
6. բանկային և ֆինանսական համակարգ
7. ռոճիկներ և գներ
8. սեփականության իրավունք
9. կարգավորում
10. ստվերային տնտեսություն (սև շուկա)

Իրենց հերթին, թվարկված 10 բաղադրիչ գործոնները նույնպես գնահատվում են 1.0-ից մինչև 5.0 արժեքային տիրույթում, յուրաքանչյուրը՝ ըստ սեփական սանդղակի և կախված մոտ 50 այլ պարամետրերի գնահատականներից։ ՀՖ տ.ա.ց. 10 բաղադրիչ գործոնների թվային գնահատականներից զատ, նրանց տրվում է նաև լրացուցիչ՝ նկարագրական գնահատական («լավացում», «անփոփոխ», «վատացում»)՝ կախված տվյալ գործոնի՝ նախորդ տարվա թվային արժեքի նկատմամբ ընթացիկ տարվա գնահատականի փոփոխությունից։ Հաշվի առնելով ՀՖ մասնագետների կողմնորոշումը՝ ինքնին հասկանալի է, որ, օրինակ, «լավացում» նշանակում է «ավելի ազատականացում» և, հետևաբար, տվյալ գործոնի ընթացիկ գնահատականն ավելի փոքր է նախորդ տարվա արժեքից։

Հենվելով ստացված տ.ա.ց. արժեքների վրա՝ քննարկվող բոլոր երկրները դասակարգվում են չորս հիմնական խմբերի։ ***Ազատ*** տնտեսությամբ են ճանաչվում այն երկրները, որոնց համար տ.ա.ց. արժեքը փոքր կամ հավասար է 1.95-ի։ ***Հիմնականում ազատ*** են համարվում այն երկրների տնտեսությունները, որոնց տ.ա.ց. արժեքը գտնվում է 2.00-ից մինչև 2.95 տիրույթում։ ***Հիմնականում ոչ ազատ*** երկրների տ.ա.ց. արժեքը գտնվում է 3.00-ից մինչև 3.95 տիրույթում, իսկ ***ոչ ազատ*** տնտեսությամբ են ճանաչվում այն երկրները, որոնց տ.ա.ց. արժեքը մեծ կամ հավասար է 4.00-ի։ Հաշվի առնելով ՀՖ գաղափարախոսությունը՝ զարմանալի չէ, որ «ազատ տնտեսական դաշտով երկրներ» արտահայտությանն իբրև հոմանիշ ՀՖ

ՏԱՑ տեղեկատուներում հաճախ կիրառվում է պարզապես «ազատ երկրներ» արտահայտությունը:

Սույն խորագրի հավելվածում՝ Աղյուսակ 1.Ա-ում, հանրագումարի են բերված ՀՖ 2003թ. տեղեկատուում քննարկվող աշխարհի 164 երկրներից այն 156-ի վերաբերյալ տվյալները, որոնց համար տեղեկատուում առկա են տ.ա.ց. և նրա 10 բաղադրիչ գործոնների գնահատականները[1]: Աղյուսակի առաջին սյունակում երկրները դասակարգված են ըստ տ.ա.ց. արժեքի աճի: Երկրորդ սյունակում բերվում է տվյալ երկրի զբաղեցրած կարգը 156 երկրների շարքում: Աղյուսակ 1.Ա-ի երրորդ սյունակում բերվում է տվյալ երկրի համար 2003թ. գնահատված տ.ա.ց. արժեքը, իսկ հաջորդ 10 սյունակներում բերվում են այս ցուցիչի գնահատականի հիմքում ընկած 10 բաղադրիչ գործոնների գնահատականները: Օգտագործվող մեթոդաբանության որոշ առանձնահատկությունների հետևանքով միանգամից մի քանի երկիր կարող է զբաղեցնել միևնույն կարգային տեղը: Այսպես, օրինակ՝ Դանիան, Էստոնիան և ԱՄՆ-ը զբաղեցնում են միևնույն՝ 3-րդ տեղը, յուրաքանչյուրը՝ տ.ա.ց. 1.80 արժեքով: Մինչդեռ, օրինակ, 41-րդ, 42-րդ և այլ կարգերը զբաղեցված չեն:

Հավելվածի Աղյուսակ 1.Բ-ում զետեղված են 1995-2003թթ. Ժամանակահատվածի ՀՖ բոլոր տեղեկատուներում քննարկվող երկրների տ.ա.ց. արժեքները: Ընդ որում, աղյուսակի առաջին հատվածում բերված են աշխարհի 161 երկրների շարքում տվյալ երկրի զբաղեցրած կարգերը, իսկ երկրորդ հատվածում՝ այդ երկրի տ.ա.ց արժեքները նշված 9 տարիների համար:

Համաձայն [2]-ի (տե՛ս նաև Աղյուսակ 1.Ա), 2003թ. տնտեսական դաշտն ազատ էր ճանաչվել քննարկվող 156 երկրներից 15-ում, որոնցից 12-ը պատկանում են ՏՀԶԿ-ին[2]: Բացառություն են կազմում չինական Հոնկոնգը և Սինգապուրը, որոնք արդեն շուրջ 10 տարի գլխավորում են ՀՖ ՏԱՑ տեղեկատուի վարկանիշային

[1] Նյութի պատրաստման պահին ՀՖ ինտերնետային կայքում բացակայում էին 2004թ. ՏԱՑ ամբողջական տվյալները:
[2] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD):

աղյուսակների համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերը: Հատկանշական բացառություն է նաև Էստոնիան, որի տնտեսական դաշտի աննախադեպ ազատականացմանն է նվիրված ՀՖ 2003թ. տեղեկատուի առանձին՝ «Ինչպես դա հաջողվեց Էստոնիային» գլուխը [2, գլուխ 3, էջ 35-37]: 56 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, գնահատված էին իբրև «հիմնականում ազատ» տնտեսություններով երկրներ: Ամենամեծ, «հիմնականում ոչ ազատ» 74 երկրների խումբը սկսվում է Բրազիլիայով և եզրափակվում Տաջիկստանով: Վերջապես, 11 երկրների տնտեսությունները գնահատված էին իբրև ոչ ազատ: Դրանց թվում են Իրանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը և Բելառուսը: Տ.ա.ց. ցուցակը խորհրդանշական կերպով եզրափակում էր Հյուսիսային Կորեան՝ 156-րդ երկիրը, որի համար, սակայն, չէին բերվում ցուցիչների իրական թվային գնահատականներ:

Ըստ ՀՖ փորձագետների, տնտեսական նշանակալի ազատականացման համաշխարհային գործընթացը, որ ծայր առավ Բեռլինի պատի փլուզմամբ, շարունակվեց մինչև 1990-ականների վերջը: Չնայած ճապոնական տնտեսահամակարգի լուրջ դժվարություններին, ասիական «վագրերի» զարգացման դանդաղմանը և ՌԴ տնտեսական դեֆոլթին, այս գործընթացը նկատելի էր նաև 2000-03թթ., քանզի «ԱՄՆ-ը շարունակում էր քարշել ողջ աշխարհը դեպի տնտեսական զարգացում» [2, էջ XI]: 2000թ. վերջին այս քարշող գնացքը «դուրս ընկավ գծերից» (ահաբեկչություն, Աֆղանստան, Իրաք, նավթի միջազգային բարձր գներ և այլն) և արձանագրվեց այն, ինչ տնտեսագետներն անվանում են «սինխրոնացված համաշխարհային շրջադարձ» [2, էջ XI]: Արդյունքում՝ նոր դարասկզբին տնտեսական ազատականացման համաշխարհային միտումները դանդաղել են, բայց չեն դադարել գործելուց: Համաձայն ՀՖ փորձագետների, երկրների տնտեսական ազատությունը ներկայում շարունակվում է հոմանիշ համարվել ուղղակի ազատության, հարստության և զարգացվածության հետ:

2. Հայաստան, ԱՊՀ և տարածաշրջան. համեմատական վերլուծություն. ՀՖ 2003թ. ՏԱՑ

Համաձայն [2]-ի, 2003թ., ինչպես և նախորդ 2 տարիներին, Հայաստանը գնահատվել է իբրև «հիմնականում ազատ» տնտեսությամբ երկիր՝ տ.ա.ց. 2.65 արժեքով և աշխարհի 156 երկրների շարքում 44-րդ տեղով: Ըստ [2, էջ 7]-ի, 1996-ից ի վեր դեպի տնտեսության ազատականացում առավելագույն առաջխաղացում դրսևորած 11 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 2-րդ տեղը (1.1 միավոր)՝ զիջելով միայն Ադրբեջանին (1.4 միավոր): Վերջինս, սակայն, ի տարբերություն Հայաստանի, դեռ գտնվում է «հիմնականում ոչ ազատ» երկրների խմբում՝ տ.ա.ց. 3.35 արժեքով և աշխարհի 156 երկրների շարքում՝ 104-րդ տեղով:

Հայաստանի տնտեսական դաշտի սրընթաց ազատականացումը պատկերավոր ներկայացրել ենք Նկար 1-ում, ուր բերված է քննարկվող 156 երկրների դիրքերի բաշխվածությունը 1996 և 2003թթ. համար (սլաքներով նշված է Հայաստանի դիրքը): Նկարում տ.ա.ց. առանցքի սանդղակն ընտրված է այնպես, որ գրաֆիկի ցանցային գծերն առանձնացնում են դասակարգված երկրների խմբերը: Նկարի ստորին աջ մասում պատկերված են Հայաստանի և մի շարք այլ երկրների տ.ա.ց. 1996 և 2003թթ. արժեքները: Այսպիսով, 8 տարում Հայաստանը 1996թ. «հիմնականում ոչ ազատ» երկրների վերին հատվածում իր զբաղեցրած 115-րդ դիրքից տեղափոխվել է 44-րդ դիրք՝ «հիմնականում ազատ» երկրների խումբ: Ավելին, այս առաջխաղացումն այդ ողջ ժամանակահատվածում պահպանել է իր բարձր տեմպը:

Այսպես, համաձայն 2000թ. ՀՖ ՏԱՑ տեղեկատուի, Հայաստանը և Հունգարիան 1999թ. համեմատ ցուցաբերել են տ.ա.ց. արժեքի առավելագույն առաջխաղացում՝ 0.4 և 0.35 միավորով համապատասխանաբար. «Հայաստանի, Հունգարիայի և Էստոնիայի տնտեսական հաջողությունների օրինակները ազատական շուկայական քաղաքականության իրականացման արդյունք են. 1994թ. համեմատ իրական ՀՆԱ-ն աճել է Հայաստանում՝ 5.7%, Էստոնիայում՝ 4.2%, Հունգարիայում՝ 3.3%» [4, էջ 2-

3]: Ըստ [2]-ի, Հայաստանը հատեց «հիմնականում ոչ ազատ» երկրների խմբից «հիմնականում ազատ» խմբի եզրագիծը հաջորդ՝ 2001թ. (այս մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև):



	2003թ.	1996թ.
Ֆրանսիա	40	22
Քուվեյթ	40	28
Թաիլանդ	40	24
Տրինիդադ և Տոբագո	43	33
Հայաստան	44	115
Բոլիվիա	44	40
Կոստա Ռիկա	44	58
Հունգարիա	44	61
Մադագասկար	44	84

ՀՖ ՏԱՑ 2003թ. տվյալների համեմատական վերլուծության նպատակով Հավելվածի Աղյուսակ 1-ից առանձնացնենք Բալթյան երկրների, ԱՊՀ բոլոր հանրապետությունների, ինչպես նաև Թուրքիայի ու Իրանի տ.ա.ց. ածեքները (Աղյուսակ 2): Ինչպես հետևում է այս աղյուսակից, համաձայն ՀՖ փորձագետների, 2003թ. Հայաստանը հանդիսանում էր ԱՊՀ և մեր տարածաշրջանի միակ «հիմնականում ազատ» տնտեսությամբ երկիրը: Ընդ որում, տ.ա.ց. այնպիսի բաղադրիչների արժեքով, ինչպիսիք են «առևտրային քաղաքականությունը» (1.0), «դրամային հոսքերը» (2.0) և «բանկեր և ֆինանսները» (2.0), Հայաստանը գերազանցում էր ԱՊՀ բոլոր հանրապետություններին, ինչպես նաև Թուրքիային ու Իրանին: «Կարգավորում» բաղադրիչի արժեքը միևնույնն էր Հայաստանի և ԱՊՀ մյուս հանրապետությունե-

րի համար: Մինչդեռ, «սև շուկա» բաղադրիչի արժեքով Հայաստանը (4.0) գտնվում էր ավելի բարենպաստ վիճակում, օրինակ, Վրաստանի (5.0), Ադրբեջանի (4.5), Իրանի (5.0) և Բելառուսի (5.0) համեմատ, սակայն զիջում էր Մոլդովային (3.5) և Թուրքիային (3.5):

Աղյուսակ 2. Բալթյան, ԱՊՀ և մեր տարածաշրջանի երկրների ցուցանիշները, 2003թ.

Աղյուսակ 2. ՀՖ ՏԱՑ 2003թ.	Կարգը 156 երկրների շարքում	տ.ա.ց.	Առևտրային քաղաքականություն	Կառավարության ֆինանսական ծախքեր	Պետական միջամտում	Դրամային քաղաքականություն	Դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ	Բանկեր և ֆինանսներ	Ոռճիկ և գներ	Սեփականության իրավունք	Կարգավորում	Սև շուկա	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
Էստոնիա	6	1.80	1.0	3.5	2.0	2.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.5	Ազատ
Լիտվա	29	2.35	2.0	3.5	2.0	1.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	3.0	Հիմնականում ազատ
Լատվիա	33	2.45	2.0	4.0	2.0	1.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	3.5	
Հայաստան	44	2.65	**1.0**	2.5	**3.0**	2.0	**2.0**	**2.0**	3.0	3.0	**4.0**	**4.0**	
Մոլդովա	92	3.20	2.0	3.5	3.0	4.0	3.0	3.0	3.0	3.0	4.0	3.5	Հիմնականում ոչ ազատ
Ադրբեջան	104	3.35	3.0	3.0	3.0	1.0	4.0	4.0	3.0	4.0	4.0	4.5	
Ղրղզստան	104	3.35	4.0	2.5	2.0	4.0	3.0	3.0	3.0	4.0	4.0	4.0	
Վրաստան	113	3.40	4.0	2.0	2.0	4.0	3.0	3.0	3.0	4.0	4.0	5.0	
Ղազախստան	119	3.50	4.0	3.0	2.0	3.0	4.0	4.0	3.0	4.0	4.0	4.0	
Թուրքիա	119	3.50	3.0	4.5	3.0	5.0	3.0	3.0	3.0	3.0	4.0	3.5	
Ուկրաինա	131	3.65	3.0	4.5	3.0	4.0	4.0	3.0	3.0	4.0	4.0	4.0	
Ռուսաստան	135	3.70	4.0	3.5	2.5	5.0	3.0	4.0	3.0	4.0	4.0	4.0	
Տաջիկստան	143	3.95	3.0	2.5	3.0	5.0	4.0	5.0	4.0	4.0	4.0	5.0	
Իրան	146	4.15	3.0	2.5	4.0	4.0	4.0	5.0	4.0	5.0	5.0	5.0	Ոչ ազատ
Թուրքմենստան	146	4.15	5.0	2.5	4.0	4.0	4.0	5.0	4.0	4.0	4.0	5.0	
Ուզբեկստան	149	4.25	5.0	3.5	3.0	5.0	4.0	5.0	4.0	4.0	5.0	4.0	
Բելառուս	151	4.30	4.0	4.0	3.0	5.0	4.0	4.0	5.0	4.0	5.0	5.0	

Հայաստանի 2003թ. ցուցանիշները ամբողջական համեմատական վերլուծության ենթարկելու նպատակով առանձնացնենք 3 խումբ երկրներ: Առաջինը այն 56 երկրներն են, որոնք «հիմնականում ազատ» են ճանաչվել ՀՖ 2003թ. ՏԱՑ տեղեկատուում, երկրորդը՝ ԱՊՀ անդամ 12 հանրապետությունները և 3-րդը՝ մեր տարածաշրջանի 6 երկրները[1]: Այս խմբերի համար հաշվարկենք տ.ա.ց. և նրա 10 բաղադրիչ գործոնների միջին խմբային արժեքները և դիտարկենք Հայաստանի 2003թ. համապա-

[1] Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան ու Ռուսաստան: Վերջինս դիտարկվում է Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային համակարգերում իր ակտիվ դերակատարման փաստից ելնելով:

տասխան ցուցանիշների շեղումը դրանցից: Նկար 2-ում ի մի են բերված այդպիսի դիտարկումների արդյունքները: Նկարից հետևում է, որ 2003թ. Հայաստանը՝ ըստ տ.ա.ց. արժեքի, իր՝ «հիմնականում ազատ» խմբի 56 երկրների շարքում զբաղեցնում էր ընդհանուր առմամբ կենտրոնական դիրք: Այսպես, Հայաստանի տ.ա.ց. բացասական շեղումը խմբի միջին արժեքից դեպի «ավելի ոչ ազատ» գոտի կազմում էր ընդամենը -0.10 միավոր (կամ -2.0%, եթե հաշվի առնենք այս ցուցիչի արժեքների հնարավոր տիրույթը): Սակայն, ըստ տ.ա.ց. այնպիսի բաղադրիչների, ինչպիսիք են ստվերային «սև շուկան» ու «կարգավորումը», Հայաստանի բացասական շեղումը միջին խմբային արժեքներից արդեն զգալի էր՝ -1.27 և -1.04 միավոր (կամ -25.4% և -20.8% համապատասխանաբար): Միևնույն ժամանակ, «առևտրային քաղաքականություն» և «կառավարության ֆինանսական ծախքեր» գործոններով Հայաստանն իր խմբում գտնվում էր ավելի բարենպաստ դիրքում՝ դրական շեղումը այստեղ կազմում է +1.79 և +0.98 միավոր համապատասխանաբար (կամ +35.8% և +19.6%):

Միանգամայն այլ է ԱՊՀ և մեր տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի 2003թ. ցուցանիշների համեմատության պատկերը: Այստեղ՝ ըստ տ.ա.ց. արժեքի, Հայաստանն էականորեն գերազանցում է բոլոր այդ երկրներին. դրական շեղումը ԱՊՀ երկրների միջին արժեքից 2003թ. կազմել է +0.97 միավոր (կամ +35.8%), իսկ տարածաշրջանային միջինից՝ +0.81 միավոր (կամ +16.2%, տե՛ս Նկար 2): Գերազանցումը դեպի ավելի ազատական տնտեսական դաշտ հատկապես զգալի էր «առևտրային ու դրամային քաղաքականություններ» գործոնների առումով (ըստ ԱՊՀ երկրների՝ +50.0% և +36.6% համապատասխանաբար, ըստ տարածաշրջանի երկրների՝ +40.0% և +30.0% համապատասխանաբար), ինչպես նաև «բանկեր և ֆինանսներ» ու «դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ» գործոնների առումով: Անգամ այն գործոններով («սև շուկա», «կարգավորում», տե՛ս վերևում), որոնց առումով Հայաստանն ուներ բացասական շեղում իր՝ «հիմնականում ազատ» 56 երկրների միջին խմբային արժեքներից, Հայաստանը տակավին գերազանցում է

ԱՊՀ և տարածաշրջանի երկրներին 0.17 և 0.33 միավոր դրական շեղումով համապատասխանաբար (տե՛ս Նկար 2)։



Այսպիսով, համաձայն [2]-ի, դեպի տնտեսական ազատականացում Հայաստանի առաջխաղացումը 2002-03թթ. պայմանավորված էր առաջին հերթին «առևտրային քաղաքականություն» և «կառավարության ֆինանսական ծախքեր» գործոնների գնահատականներով։ Իրենց հերթին, այս գնահատականները պայմանավորված էին.

- «առևտրային քաղաքականություն» գործոնի առումով՝ 2001թ. միջին կշռված սակագնի փոքր արժեքով (1.9% համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի) և ԱՄՆ առևտրի նախարարության այն «դրական» գնահատականով, համաձայն որի՝ «Հայաստան ներկրված ապրանքների հիմնական տեսականին չի սահմանա-

փակվում, չի քվոտավորվում և չի լիցենզավորվում: Սակայն, միևնույն ժամանակ, որոշ ապրանքների (զենք, պայթուցիկներ, դեղորայք) ներկրումը պահանջում է հատուկ արտոնագրում»,

- «կառավարության ֆինանսական ծախքեր» գործոնի առումով՝ 2001թ. Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրված եկամտահարկի (20%), իրավաբանական անձանց շահութահարկի (20%) և միջին հարկատուի սահմանային տոկոսադրույքի (10%) ընդհանուր առմամբ «դրական» գնահատականով և այն հանգամանքով, որ, համաձայն ՀՖ Տնտեսական հետախուզման բաժնի, ՀՀ կառավարության ծախսերի ծավալը 2001-02թթ., ՀՆԱ նկատմամբ տոկոսներով արտահայտված՝ նվազել է 2.9 տոկոսային միավորով [2, էջ 85]:

Տարածաշրջանային պատկերը ժամանակի մեջ ամբողջական տեսնելու նպատակով, հենվելով [3]-ում բերվող տվյալների վրա (տե՛ս նաև Աղյուսակ 1.Բ), Նկար 3-ում առանձին ներկայացրել ենք 1996-2003թթ. ժամանակահատվածում մեր տարածաշրջանի 6 երկրների տ.ա.ց. արժեքների (Նկար 3.ա), ինչպես նաև աշխարհի 156 երկրների շարքում նրանց զբաղեցրած տեղերի փոփոխությունը (Նկար 3.բ): Ինչպես և Նկար 1-ում, Նկար 3.ա-ում նույնպես տ.ա.ց. առանցքի սանդղակը ընտրված է այնպես, որ ցանցային գծերը բաժանեն տարբեր խմբերում հայտնված երկրների դիրքերը:

Նկար 3-ը ակնառու պատկերում է անցած 8 տարում մեր տարածաշրջանում տնտեսական ազատականացման տեսանկյունից տեղի ունեցած էական կառուցվածքային փոփոխությունը: Իրոք, 1990-ականների վերջին տարածաշրջանի միակ «հիմնականում ազատ» երկիրը Թուրքիան էր: Սակայն, համաձայն ՀՖ փորձագետների, սկսած 1998-ից, արձանագրվում է այս երկրի տ.ա.ց. գնահատականի անընդհատ վատացում, իսկ 2001թ. Թուրքիան նույնիսկ լքում է «հիմնականում ազատ» երկրների խումբը և հայտնվում «հիմնականում ոչ ազատ» խմբի միջնամասում: Նշված ժամա-

նակահատվածում քննարկվող 156 երկրների շարքում Թուրքիայի դիրքը փոփոխվում է 52-րդից մինչև 119-րդ:

Ճիշտ հակառակն է պատկերը Հայաստանի համար, որի տ.ա.ց. գնահատականները, սկսած 1998-ից, անընդհատ բարելավվում են: Արդյունքում՝ նույն 2001թ. Հայաստանը հատում է «հիմնականում ոչ ազատ» երկրների խմբի եզրագիծը և գրավում տարածաշրջանի միակ «հիմնականում ազատ» երկրի դիրքը: Ինչպես արդեն նշել էինք վերը, Հայաստանի կարգային փոփոխությունը 1996-2003թթ. ժամանակահատվածում 115-րդ տեղից 44-րդ տեղում հայտնվելն է: Նշված ժամանակահատվածում խմբային փոփոխություն է արձանագրվել նաև Ադրբեջանի համար, որը նույն՝ 2001թ. հատել է «ոչ ազատ»-ից «հիմնականում ոչ ազատ» երկիր եզրագիծը: Աշխարհի 156 երկրների շարքում այն 138-րդ տեղից տեղափոխվել է 104-րդ տեղը: Տարածաշրջանի մյուս երկրները հիմնականում պահպանել են իրենց խմբային դիրքերը, սակայն անհրաժեշտ է նշել 2001-ից սկսած՝ Իրանի տնտեսական դաշտի ազատականացման աճող տեմպը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ չնայած 2000-03 թվականներին Ռուսաստանի Դաշնությունը պահպանել է իր տ.ա.ց. գնահատականը (3.70, Նկար 3.ա), սակայն այդ նույն ժամանակահատվածում այն կրել է նկատելի վարկանիշային նահանջ՝ 122-րդ տեղից հայտնվելով 135-րդ տեղում (Նկար 3.բ):

Այսպիսով, դատելով ՀՖ 2003թ. ՏԱՑ տեղեկատուի տվյալներով՝ կարելի է եզրակացնել, որ անդրկովկասյան 3 հանրապետություններն իրենց տնտեսությունների ազատականացման տեմպերով, հատկապես տ.ա.ց. վարկանիշային ցուցանիշներով, գերազանցում են տարածաշրջանի «գերտերություններին»՝ Ռուսաստանին, Թուրքիային և Իրանին: Հայաստանը հանդիսանում է տնտեսական ազատականացման տարածաշրջանային առաջատար երկիր:





3. ՀՖ 2004թ. ՏԱՑ. Հայաստան, ԱՊՀ և տարածաշրջան

Համաձայն ՀՖ 2004թ. ՏԱՑ տեղեկատուի [5], այս տարի Հայաստանը պահպանել է իր դիրքը «հիմնականում ազատ» տնտեսությամբ երկրների խմբում՝ տ.ա.g. 2.63 արժեքով և, Ֆրանսիայի հետ մեկտեղ, գրավում է աշխարհի 156 երկրների շար-

քում նույն՝ 44-րդ տեղը: Տնտեսական ազատության առումով Հայաստանը 2004թ. շարունակում է բացարձակ առաջատար մնալ ԱՊՀ և մեր տարածաշրջանի երկրների մեջ: Ադրբեջանը, Թուրքիայի հետ մեկտեղ, զբաղեցնում է 106-րդ տեղը, ինչն առաջխաղացում է Թուրքիայի (2003թ.՝ 119-րդ տեղ) և աննշան նահանջ Ադրբեջանի համար (2003թ.՝ 104-րդ տեղ): Վրաստանի և Մոլդովայի համար արձանագրված է դիրքի բարելավում. 2003թ. 119-րդ և 92-րդ տեղերից՝ համապատասխանաբար 91-րդ և 79-րդ տեղերն այս տարի: Ընդ որում, Մոլդովան ընդհուպ մոտեցել է «հիմնականում ազատ» երկրների խմբի եզրագծին: Բարելավվել են Ռուսաստանի և Ուկրաինայի դիրքերը:

Սակայն, մինչև տվյալների հետագա քննարկմանն անցնելը, անհրաժեշտ է նշել, որ ՀՖ 2004թ. տեղեկատուում կատարված է քննարկվող բոլոր երկրների տ.ա.ց. և նրա բաղադրիչների՝ նախորդ տարիներին արձանագրված արժեքների վերահաշվարկ: Ուստի, անմիջական թվային համեմատությունները մի փոքր դժվարանում են:

Կատարված վերահաշվարկի արդյունքները Հայաստանի օրինակով պատկերել ենք Նկար 4-ում, ուր բերված են Հայաստանի նախորդ տարիների տ.ա.ց. արժեքները ըստ [2]-ի և ըստ [5]-ի: Ինչպես հետևում է այս նկարից, 2003թ. համար Հայաստանի տ.ա.ց. արժեքը (2.65, ըստ [2]-ի) վերահաշվարկված է 2.59-ի: Ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանի պարագայում այս վերահաշվարկը տ.ա.ց. 3-րդ բաղադրիչի («կառավարության ֆինանսական ծախքեր») գնահատականի՝ 2.5-ից 1.9 փոփոխության արդյունք է (տե՛ս Նկար 4-ի ներքևում՝ ձախից բերվող լուսամուտը): Այսպիսով, համաձայն [5]-ի, Հայաստանի 2003թ. տ.ա.ց. արժեքը 0.06 միավորով [0.06 = (2.5-1.9):10] կամ 1.2%-ով ավելի ազատական կամ «լավն» էր, քան [2]-ում բերվող գնահատականը: Միևնույն ժամանակ, ըստ [5]-ի, 2004թ. Հայաստանի տ.ա.ց. գնահատականը նախորդ տարվա նկատմամբ ունեցել է որոշակի «վատացում» 2.63 - 2.59 = 0.04 միավորով կամ 0.8%-ով: Ինչպես հետևում

է այս նկարից, համաձայն վերահաշվարկված տվյալների, Հայաստանը հատել է «հիմնականում ազատ» երկրների եզրագիծը մեկ տարի ավելի ուշ՝ 2002թ.:



Այս պարագայում, համարժեք համեմատական վերլուծության նպատակով դիտարկենք, օրինակ, Անդրկովկասի 3 հանրապետությունների տ.ա.g. բաղադրիչների ոչ թե թվային, այլ նկարագրային գնահատականները (տե՛ս Աղյուսակ 3): Ինչպես հետևում է այս աղյուսակից, Հայաստանի համար նկատելի է տնտեսական ազատականացման տեմպի որոշակի դանդաղում: Իրոք, եթե 2003թ. բարելավվել էին Հայաստանի տ.ա.g. 2 բաղադրիչների գնահատականները, ապա այս տարի բարելավում է արձանագրված միայն մեկ՝ «բանկեր և ֆինանսներ» գործոնով: Հակառակ դրան, այս տարի «վատացում» է արձանագրված 2 բաղադրիչների առումով՝ նախորդ տարվա մեկի («ռոճիկ և գներ» բաղադրիչ) փոխարեն: Մյուս կողմից՝ տնտեսական ազատականացման որոշակի աճ է արձանագրված Ադրբեջանի և Վրաստանի համար: Այսպես, այս տարի Ադրբեջանի տ.ա.g. 10 բաղադրիչներից և

ոչ մեկի համար չի արձանագրվել «վատացում» գնահատականը (նախորդ տարի՝ 1-ում), իսկ Վրաստանի համար՝ միայն մեկ բաղադրիչի համար (նախորդ տարի՝ 2-ում):

Աղյուսակ 3. Անդրկովկասի երկրների տ.ա.ց. բաղադրիչ գործոնների նկարագրային գնահատականները 2003 և 2004թթ.

տ.ա.ց. գործոնների գնահատականները ըստ ՀՖ ՏԱՑ 2003 և 2004թթ. տեղեկատուների		Առևտրային քաղաքականություն	Կառավարության ֆինանսական ծախքեր	Ներտակամ միջանտում	Դրամային քաղաքականություն	Դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ	Բանկեր և ֆինանսներ	Ոռճիկ և գներ	Սեփականության իրավունք	Կարգավորում	Սև շուկա
Հայաստան	2003թ.	անփ.	լավ	անփ.	լավ	անփ.	անփ.	վատ	անփ.	անփ.	անփ.
	2004թ.	վատ	վատ	անփ.	անփ.	անփ.	լավ	անփ.	անփ.	անփ.	անփ.
Ադրբեջան	2003թ.	անփ.	վատ	անփ.	լավ	անփ.	անփ.	լավ	անփ.	անփ.	անփ.
	2004թ.	անփ.	լավ	լավ	անփ.	անփ.	անփ.	անփ.	անփ.	անփ.	անփ.
Վրաստան	2003թ.	վատ	անփ.	լավ	վատ	անփ.	լավ	լավ	անփ.	անփ.	անփ.
	2004թ.	անփ.	վատ	լավ	լավ	անփ.	անփ.	անփ.	անփ.	անփ.	լավ

ՀՖ ՏԱՑ տվյալների մեր վերլուծությունը եզրափակենք ԱՊՀ և մեր տարածաշրջանի երկրների միջին խմբային արժեքների հետ Հայաստանի տ.ա.ց. և նրա բաղադրիչների արժեքների համեմատությամբ (Նկար 5.ա և բ): Այս գրաֆիկները կառուցված են՝ ելնելով ՀՖ 2004թ. ՏԱՑ տեղեկատուի [5] տվյալներից, ճիշտ այնպես, ինչպես Նկար 2-ը՝ [2]-ի տվյալների հիման վրա: Այս անգամ, սակայն, մենք առանձնացրել ենք տարածաշրջանի (Նկար 5.ա) և ԱՊՀ (Նկար 5.բ) երկրների գրաֆիկները և, գործող միտումներն ավելի ցայտուն պատկերելու նպատակով, բերել ենք Հայաստանի ցուցիչների միջին խմբային արժեքներից շեղումները 3 առանձին տարիների համար (1998, 2003 և 2004թթ.):

Ինչպես հետևում է բերված գրաֆիկներից, 2003թ. համեմատ նկատելի է Հայաստանի առաջխաղացման դանդաղումը տարածաշրջանի երկրների նկատմամբ՝ տ.ա.ց. 0.88-0.76=0.12 միավորով (Նկար 5.ա) և ԱՊՀ երկրների նկատմամբ՝ տ.ա.ց. 0.07 միավորով (Նկար 5.բ): Թե՛ մեր տարածաշրջանի, թե՛ ԱՊՀ երկրների միջին

խմբային արժեքներից Հայաստանի համապատասխան ցուցիչների դրական շեղումը կրճատվել կամ մնացել է անփոփոխ տ.ա.ց. համարյա բոլոր բաղադրիչների առումով: Բացառություն է կազմում «բանկեր և ֆինանսներ» բաղադրիչը, ըստ որի 2004թ. տարածաշրջանի երկրների միջին արժեքից կարելի է տեսնել Հայաստանի ցուցիչի դրական շեղման աճ՝ 0.83 միավորով (կամ 16.6%-ով) և ԱՊՀ երկրների միջին արժեքից՝ 0.92 միավորով (կամ 18.4%-ով): Մյուս բացառությունը վերաբերում է «դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ» բաղադրիչին, որի առումով Հայաստանի դրական շեղումը աճել է միայն ԱՊՀ երկրների նկատմամբ՝ 0.17 միավորով (կամ 3.4%-ով):

Այսպիսով, ՀՖ փորձագետների գնահատմամբ՝ անցած 8 տարիները Հայաստանի տնտեսական դաշտի էական ազատականացման տարիներ էին: Այս ընթացքում առավել առաջխաղացում է արձանագրվել տ.ա.ց. այնպիսի բաղադրիչների առումով, ինչպիսիք են «առևտրային ու դրամային քաղաքականությունները», «կառավարության ֆինանսական ծախքերը», «բանկերը և ֆինանսները»: 2001-02թթ. Հայաստանը դարձել է մեր տարածաշրջանի և ԱՊՀ երկրների մեջ միակ «հիմնականում ազատ» տնտեսությամբ երկիրը, այդ դիրքում փոխարինելով Թուրքիային: 2004թ., առաջին անգամ 1999-ից հետո, արձանագրվել է տնտեսական ազատականացման տեմպերի դանդաղում: Այս առումով Հայաստանի հետագա առաջխաղացման համար առավել կարևոր գործոններ են հանդիսանում տ.ա.ց. այնպիսի բաղադրիչներով նկարագրվող տնտեսական գործունեության ոլորտները, ինչպիսիք են ստվերային «սև շուկան», «կարգավորումը», «ռոճիկներ և գները»:


Նկար 5.ա. Հայաստանի ցուցիչների արժեքների շեղումը տարածաշրջանի միջին արժեքներից. ՀՖ 2004թ. ՏԱՑ
1998թ.
2003թ.
2004թ.
տ.ա.ց.
Առևտրային քաղաքականություն
Կառավարության ֆինանսական ծախքեր
Պետական միջամտում
Դրամային քաղաքականություն
Դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ
Բանկեր և ֆինանսներ
Ոռոգիկ և գներ
Սեփականության իրավունք
Կարգավորում
ՍԱ շուկա
0,26 0,88 0,76
1,50 2,00 0,83
0,23 1,00 0,73
-0,08 0,17 -0,17
0,00 1,50 1,33
-0,50 1,17 1,17
0,33 1,50 2,33
0,67 0,17 0,17
0,50 0,83 0,83
-0,17 0,17 0,17
0,17 0,33 0,17
Սպասելի է աճում
Սպասելի չ աճում


Նկար 5.բ. Հայաստանի ցուցիչների արժեքների շեղումը ԱՊՀ միջին արժեքներից. ՀՖ 2004թ. ՏԱՑ
1998թ.
2003թ.
2004թ.
տ.ա.ց.
Առևտրային քաղաքականություն
Կառավարության ֆինանսական ծախքեր
Պետական միջամտում
Դրամային քաղաքականություն
Դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ
Բանկեր և ֆինանսներ
Ոռոգիկ և գներ
Սեփականության իրավունք
Կարգավորում
ՍԱ շուկա
0,53 1,04 0,97
2,00 2,50 1,50
0,68 1,03 0,74
0,33 0,04 0,04
0,00 1,83 1,50
-0,42 1,50 1,67
0,67 1,75
0,75 0,42 0,42
0,75 0,83 0,83
0,00 0,17 0,17
0,50 0,33 0,13
Սպասելի է աճում
Սպասելի չ աճում

Աղբյուրներ և գրականություն

1. NIC Global Trends 2020. Inagural Conference. 6 Nov. 2003.
2. 2003 Index of Economic Freedom. Gerald P. O'Driscoll, Jr., Edwin J. Feulner, Mary O'Grady. The Heritage Foundation, The Wall Street Journal and Dow Jones & Co., Inc. 2003.
3. http://www.heritage.org/
4. 2000 Index of Economic Freedom. The Heritage Foundation.
5. 2004 Index of Economic Freedom. The Heritage Foundation.

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1.Ա «Հերիթջ Ֆաունդեյշն» տնտեսական ազատության ցուցիչներ, 2003թ. Աշխարհի 156 երկիր: Գունավորումը՝ ըստ տարածաշրջանների. ՏՀԶԿ, Ասիա, Չինաստան (ներառյալ Հոնկոնգը և Թայվանը), Լատինական և Կենտրոնական Ամերիկան, Աֆրիկան, Մեծ Միջին Արևելքը, նախկին ԽՍՀՄ-ը և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպան

Երկրներ	Կարգը 156 երկրների շարքում	ստ.ա.ց.	Առևտրային քաղաքականություն	Կառավարության ֆինանսական ծախքեր	Պետական միջամտում	Դրամային քաղաքականություն	Դրամային հոսքեր և արտաքին ներդրումներ	Բանկեր և ֆինանսներ	Ռոճիկ և գներ	Սեփականության իրավունք	Կարգավորում	Սև շուկա
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ազատ երկրների խումբ												
Հոնկոնգ (Չինաստան)	1	1,45	1	2	3	1	1	1	2	1	1	1,5
Սինգապուր	2	1,5	1	2	3	1	1	2	2	1	1	1
Լյուքսեմբուրգ	3	1,7	2	4	2	1	1	1	2	1	2	1
Նոր Զելանդիա	3	1,7	2	4	2	1	1	1	2	1	2	1
Իռլանդիա	5	1,75	2	3	2	2	1	1	2	1	2	1,5
Դանիա	6	1,8	2	4,5	3,5	1	2	1	1	1	1	1
Էստոնիա	6	1,8	1	3,5	2	2	1	1	1	2	2	2,5
ԱՄՆ	6	1,8	2	3,5	2	1	2	1	2	1	2	1,5
Ավստրալիա	9	1,85	2	3,5	2	2	2	1	2	1	2	1
ՄԹ	9	1,85	2	4	2	1	2	1	2	1	2	1,5
Ֆինլանդիա	11	1,9	2	4	2	1	2	2	2	1	2	1
Իսլանդիա	11	1,9	2	3	2	2	2	3	1	1	2	1
Նիդեռլանդներ	11	1,9	2	4	2	2	1	1	2	1	3	1
Շվեդիա	11	1,9	2	4,5	2,5	1	1	1	2	1	3	1
Շվեյցարիա	15	1,95	2	3,5	3	1	2	1	2	1	3	1
Հիմնականում ազատ երկրների խումբ												
Բահրեյն	16	2	3	2	3	1	2	1	3	1	2	2
Չիլի	16	2	2	2,5	2	2	2	2	2	1	3	1,5
Կանադա	18	2,05	2	4	2,5	1	3	2	2	1	2	1
Ավստրիա	19	2,1	2	4,5	2	1	2	2	2	1	3	1,5
Բելգիա	19	2,1	2	5	2	1	1	2	2	1	3	2
Գերմանիա	19	2,1	2	4,5	2	1	1	3	2	1	3	1,5

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Բահամներ	22	2,15	5	1,5	2	1	3	2	3	1	1	2
Կիպրոս	22	2,15	2	3,5	3	1	3	2	2	1	2	2
Բարբադոս	24	2,2	3	4	2	1	3	2	2	1	2	2
ՄԱԷ	24	2,2	2	2	3	1	3	3	2	2	3	1
Էլ Սալվադոր	26	2,25	2	2	2	2	2	2	2	3	2	3,5
Նորվեգիա	27	2,3	2	4	3	1	3	3	2	1	3	1
Թայվան	27	2,3	2	3	2,5	1	3	2	2	2	3	2,5
Իտալիա	29	2,35	2	5	2	1	2	2	2	2	3	2,5
Լիտվա	29	2,35	2	3,5	2	1	2	2	2	3	3	3
Իսպանիա	29	2,35	2	4	2,5	2	2	2	2	2	3	2
Պորտուգալիա	32	2,4	2	4	2	2	2	3	2	2	3	2
Իսրայել	33	2,45	2	5	3	1	2	3	2	2	3	1,5
Լատվիա	33	2,45	2	4	2	1	2	2	2	3	3	3,5
Բոտսվանա	35	2,5	2	3,5	4	3	2	2	2	2	2	2,5
Կամբոջա	35	2,5	2	2	1	1	3	2	3	4	4	3
Չեխիա	35	2,5	3	4,5	2	2	2	1	2	2	3	3,5
Ճապոնիա	35	2,5	2	4	3	1	3	3	2	2	3	2
Ուրուգվայ	35	2,5	3	3,5	2,5	2	2	2	2	2	3	3
Ֆրանսիա	40	2,55	2	4,5	3	1	3	3	2	2	3	2
Քուվեյթ	40	2,55	2	2,5	3	1	4	3	3	2	3	2
Թաիլանդ	40	2,55	4	2,5	1,5	1	3	3	2	2	3	3,5
Տրինիդադ և Տոբագո	43	2,6	4	3,5	3	2	2	2	2	2	3	2,5
Հայաստան	44	2,65	1	2,5	3	2	2	2	3	3	4	4
Բոլիվիա	44	2,65	3	3	2	1	1	2	2	4	4	4,5
Կոստա Ռիկա	44	2,65	2	3	2,5	3	2	3	2	3	3	3
Հունգարիա	44	2,65	3	4	2	3	2	2	3	2	3	2,5
Մադագասկար	44	2,65	2	2,5	1	3	3	3	2	3	3	4
Պանամա	44	2,65	3	4	3	1	2	1	2	4	3	3,5
Կատար	44	2,65	3	2,5	3	1	3	3	2	3	4	2
ՀԱՀ	44	2,65	3	4,5	2	2	2	2	2	3	3	3
Կորեա Հր,	52	2,7	3	3	4	2	2	3	2	2	3	3
Մալթա	52	2,7	3	4	3	1	3	3	3	1	2	4
Նամիբիա	52	2,7	3	4	3,5	3	2	2	2	2	3	2,5
Բելիզ	55	2,75	4	3,5	2	1	3	3	2	3	3	3
Հունաստան	56	2,8	2	4	2	2	3	3	3	3	3	3
Գվատեմալա	56	2,8	3	2	1	3	3	2	2	4	4	4
Յամայկա	56	2,8	4	4	3	3	1	2	2	3	3	3
Մեքսիկա	56	2,8	2	3,5	3	3	3	2	2	3	3	3,5
Օման	56	2,8	3	3	4	1	3	3	3	3	3	2
Պերու	56	2,8	4	2,5	3	1	2	2	2	4	4	3,5
Հորդանան	62	2,85	5	3,5	4	1	2	2	2	3	3	3
Ֆիլիպիններ	62	2,85	2	2,5	2	2	3	3	3	3	4	4

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Սլովենիա	62	2,85	4	4	2	3	3	3	2	3	2	2,5
Ուգանդա	62	2,85	3	3	2	1	3	3	2	3	4	4,5
Լեհաստան	66	2,9	3	4,5	2	3	3	2	3	2	3	3,5
Սլովակիա	66	2,9	3	4,5	2	3	2	2	3	3	3	3,5
Արգենտինա	68	2,95	4	3	2	1	3	4	2	4	3	3,5
Մարոկո	68	2,95	5	4	2,5	1	2	3	2	4	3	3
Սաուդյան Արաբիա	68	2,95	4	2,5	4	1	3	4	2	3	3	3
Թունիս	68	2,95	5	4	3	1	3	3	2	3	3	2,5
Հիմնականում ոչ ազատ երկրների խումբ												
Բրազիլիա	72	3	4	2,5	3	3	3	3	2	3	3	3,5
Կոլումբիա	72	3	4	3,5	3	3	2	2	2	4	3	3,5
Մալայզիա	72	3	3	3	3	1	4	4	3	3	3	3
Մալի	72	3	3	3	3	2	3	3	2	3	3	5
Մավրիկի կ,	72	3	5	3	3	2	3	2	4	2	3	3
Մոնղոլիա	72	3	2	4,5	2,5	3	3	3	2	3	4	3
Նիկարագուա	72	3	2	3	3	3	2	2	3	4	4	4
Սվազիլենդ	72	3	2	4	2	3	3	3	3	3	3	4
ԿԱՀ	80	3,05	5	2,5	3	1	2	3	3	3	4	4
Հոնդուրաս	80	3,05	3	2,5	3	3	3	3	2	3	4	4
Կոտ դ'Իվուար	80	3,05	4	3,5	1	2	3	2	3	4	4	4
Սենեգալ	80	3,05	4	2,5	3	1	3	3	3	3	4	4
Շրի Լանկա	80	3,05	3	3,5	3	3	3	3	3	3	3	3
Դոմինիկյան Հ,	85	3,1	5	1,5	1	3	3	3	3	4	4	3,5
Գվինեա	85	3,1	5	3	1	3	3	2	2	4	4	4
Քենիա	85	3,1	4	3,5	3	1	3	3	2	3	4	4,5
Մավրիտանիա	85	3,1	4	4	2	2	2	2	3	4	4	4
Կաբո Վերդե	89	3,15	4	4,5	4	1	3	3	3	3	2	4
Խորվաթիա	89	3,15	3	4	2	2	3	3	3	4	4	3,5
Գաբոն	89	3,15	5	4,5	2	1	3	3	3	3	4	3
Գայանա	92	3,2	4	4	3	2	3	3	2	3	4	4
Մոլդովա	92	3,2	2	3,5	3	4	3	3	3	3	4	3,5
Ալժիր	94	3,25	5	3,5	3	2	2	4	3	4	3	3
Բուրկինա Ֆասո	94	3,25	4	3,5	3	2	2	3	3	4	4	4
Լիբանան	94	3,25	5	3,5	3	1	3	2	2	4	4	5
Մակեդոնիա	94	3,25	5	2,5	3	2	3	2	2	4	4	5
Մոզամբիկ	94	3,25	4	3,5	3	3	2	2	3	4	4	4
Ջիբուտի	99	3,3	4	4	4	1	3	3	2	4	4	4
Գամբիա	99	3,3	4	3	3	2	3	3	3	3	4	5
Ինդոնեզիա	99	3,3	3	2,5	3	3	3	4	2	4	4	4,5
Պակիստան	99	3,3	5	3	3	2	3	3	3	4	3	4
Պարագվայ	99	3,3	3	2	3	3	3	3	3	4	4	5
Ալբանիա	104	3,35	5	3,5	3	2	2	3	2	4	4	5

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ադրբեջան	104	3,35	3	3	3	1	4	4	3	4	4	4,5
Բենին	104	3,35	4	3,5	3	2	3	3	3	4	4	4
Բուլղարիա	104	3,35	4	4	2	5	3	3	2	3	4	3,5
Կամերուն	104	3,35	5	3	3	1	3	3	3	4	4	4,5
Եգիպտոս	104	3,35	4	5	3	1	3	4	3	3	4	3,5
Ղրղզստան	104	3,35	4	2,5	2	4	3	3	3	4	4	4
Լեսոտո	104	3,35	3	4,5	3	3	3	3	3	3	4	4
Տանզանիա	104	3,35	5	2,5	2	3	3	3	3	4	4	4
Չադ	113	3,4	5	4	2	3	3	2	2	4	4	5
Ֆիջի	113	3,4	5	4	3	2	4	2	3	4	3	4
Վրաստան	113	3,4	4	2	2	4	3	3	3	4	4	5
Գանա	113	3,4	4	3,5	3	5	3	3	3	3	3	3,5
Նիգեր	113	3,4	4	3	3	2	3	3	3	4	4	5
Էկվադոր	118	3,45	4	2,5	2	5	3	3	3	4	4	4
Բանգլադեշ	119	3,5	5	2	3	1	3	4	3	4	5	5
Եթովպիա	119	3,5	5	3,5	3	1	4	4	3	4	4	3,5
Հնդկաստան	119	3,5	5	4	3	2	3	4	3	3	4	4
Ղազախստան	119	3,5	4	3	2	3	4	4	3	4	4	4
Նեպալ	119	3,5	5	2	2	2	4	4	3	4	4	5
Թուրքիա	119	3,5	3	4,5	3	5	3	3	3	3	4	3,5
Վենեսուելա	119	3,5	4	3	2	4	3	3	4	4	4	4
Զամբիա	119	3,5	4	4	2	5	3	3	3	3	4	4
Չինաստան	127	3,55	5	3	4	1	4	4	3	4	4	3,5
Հասարակածային Գվինեա	128	3,6	5	2	2	3	3	4	4	4	4	5
Հաիթի	128	3,6	3	2	2	4	4	3	3	5	5	5
Տոգո	128	3,6	3	3	3	2	4	4	3	4	5	5
Մալավի	131	3,65	4	4	3	5	3	4	3	3	4	3,5
Ռուանդա	131	3,65	5	2,5	3	2	4	3	3	4	5	5
Ուկրաինա	131	3,65	3	4,5	3	4	4	3	3	4	4	4
Եմեն	131	3,65	3	4,5	3	3	3	4	3	4	4	5
Կոնգո Հ.	135	3,7	5	4	3	1	4	4	3	4	4	5
Ռուսաստան	135	3,7	4	3,5	2,5	5	3	4	3	4	4	4
Վիետնամ	135	3,7	5	3	3	1	4	4	3	5	5	4
Ռումինիա	138	3,75	4	4,5	3	5	3	3	3	4	4	4
Բոսնիա և Հերցեգովինա	139	3,8	2	4	5	2	4	3	3	5	5	5
Նիգերիա	140	3,85	5	3,5	3	4	3	4	3	4	4	5
Սիերա Լեոնե	140	3,85	5	3,5	2	3	4	4	2	5	5	5
Գվինեա Բիսաու	142	3,9	4	4	2	3	3	5	3	5	5	5
Սուրինամ	143	3,95	4	4,5	4	5	3	4	3	3	4	5
Սիրիա	143	3,95	4	4,5	4	1	4	5	4	4	4	5
Տաջիկստան	143	3,95	3	2,5	3	5	4	5	4	4	4	5

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ոչ ազատ երկրների խումբ												
Իրան	146	4,15	3	2,5	4	4	4	5	4	5	5	5
Թուրքմենստան	146	4,15	5	2,5	4	4	4	5	4	4	4	5
Բուրմա (Մյանմար)	148	4,2	5	2	3	4	5	4	4	5	5	5
Ուզբեկստան	149	4,25	5	3,5	3	5	4	5	4	4	5	4
Հարավսլավիայի ՖՀ	149	4,25	4	3,5	4	5	5	4	3	4	5	5
Բելառուս	151	4,3	4	4	3	5	4	4	5	4	5	5
Լիբիա	151	4,3	5	3	4	1	5	5	5	5	5	5
Լաոս	153	4,4	5	3	3	5	4	5	4	5	5	5
Զիմբաբվե	153	4,4	5	4	3	5	5	5	4	5	4	4
Կուբա	155	4,45	3	4,5	4	5	4	5	5	5	4	5
Կորեա Հս,	156	5	5	5	5	5	5	5	5	5	5	5

Աղյուսակ 1.Բ «Հերիթեջ Ֆաունդեյշն» տնտեսական ազատության ցուցիչներ 1995-2003թթ.

Երկրներ	Կարգը աշխարհի 156 երկրների շարքում									տ.ա.ց.								
	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996	1995	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996	1995
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Հոնկոնգ (Չինաստան)	1	1	1	1	1	1	1	1	1	1,5	1,4	1,3	1,3	1,3	1,3	1,4	1,3	1,3
Սինգապուր	2	2	2	2	2	2	2	2	2	1,5	1,6	1,6	1,5	1,4	1,4	1,5	1,5	1,5
Լյուքսեմբուրգ	3	4	5	4	11	3	10	10		1,7	1,8	1,8	1,8	2	1,9	2	2	
Նոր Զելանդիա	3	3	4	3	3	3	4	3		1,7	1,7	1,7	1,7	1,7	1,9	1,8	1,8	
Իռլանդիա	5	4	3	7	7	7	14	14	10	1,8	1,8	1,7	1,9	1,9	1,9	2,1	2,1	2,1
Դանիա	6	12	14	27	26	21	11	10		1,8	1,9	2,1	2,3	2,3	2,3	2,1	2	
Էստոնիա	6	4	14	22	30	24	32	28	18	1,8	1,8	2,1	2,2	2,4	2,3	2,5	2,5	2,4
ԱՄՆ	6	4	5	4	4	3	4	5	5	1,8	1,8	1,8	1,8	1,8	1,9	1,8	1,9	1,9
Ավստրալիա	9	9	9	8	7	7	17	12	8	1,9	1,9	1,9	1,9	1,9	1,9	2,2	2,1	2,1
ՄԹ	9	9	7	8	4	3	6	6	5	1,9	1,9	1,8	1,9	1,8	1,9	1,9	1,9	1,9
Ֆինլանդիա	11	14	23	22	22	17	18	24		1,9	2	2,2	2,2	2,2	2,2	2,2	2,4	
Իսլանդիա	11	23	23	19	19	17	24			1,9	2,2	2,2	2,2	2,2	2,2	2,3		
Նիդեռլանդներ	11	4	8	15	13	14	7	6		1,9	1,8	1,9	2,1	2,1	2,1	2	1,9	
Շվեդիա	11	17	29	31	30	35	30	37	24	1,9	2,1	2,3	2,4	2,4	2,5	2,5	2,7	2,7
Շվեյցարիա	15	12	9	8	7	10	7	8		2	1,9	1,9	1,9	1,9	2	2	2	
Բահրեյն	16	15	9	4	4	7	3	3	3	2	2	1,9	1,8	1,8	1,9	1,7	1,8	1,7
Չիլի	16	9	13	11	14	17	18	31	23	2	1,9	2	2	2,1	2,2	2,2	2,6	2,6
Կանադա	18	15	14	11	12	20	18	14	8	2,1	2	2,1	2	2	2,2	2,2	2,1	2,1
Ավստրիա	19	20	14	15	14	14	14	14	10	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1
Բելգիա	19	20	20	17	14	14	14	14		2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	2,1	
Գերմանիա	19	20	20	22	22	24	18	19	10	2,1	2,1	2,1	2,2	2,2	2,3	2,2	2,2	2,1
Բահամներ	22	17	23	22	22	13	11	14	15	2,2	2,1	2,2	2,2	2,2	2,1	2,1	2,1	2,3
Կիպրոս	22	23	23	41	43	46	38	33		2,2	2,2	2,2	2,6	2,7	2,7	2,6	2,6	
Բարբադոս	24	26	35	37	40	37	44	52		2,2	2,3	2,4	2,5	2,6	2,5	2,7	2,9	
ՄԱԷ	24	23	14	19	19	21	18	19		2,2	2,2	2,1	2,2	2,2	2,3	2,2	2,2	
Էլ Սալվադոր	26	17	12	11	19	30	27	26	24	2,3	2,1	2	2	2,2	2,4	2,4	2,5	2,7
Նորվեգիա	27	35	38	28	30	27	30	26		2,3	2,5	2,5	2,3	2,4	2,4	2,5	2,5	
Թայվան	27	29	20	11	7	10	7	8	7	2,3	2,4	2,1	2	1,9	2	2	2	2
Իտալիա	29	29	32	28	28	30	32	33	21	2,4	2,4	2,3	2,3	2,3	2,4	2,5	2,6	2,5
Լիտվա	29	29	42	61	78	71	73	91		2,4	2,4	2,6	2,9	3	3	3,1	3,5	
Իսպանիա	29	26	35	33	35	35	37	40	21	2,4	2,3	2,4	2,4	2,4	2,5	2,6	2,7	2,5
Պորտուգալիա	32	26	32	28	28	30	27	37	27	2,4	2,3	2,3	2,3	2,3	2,4	2,4	2,7	2,7
Իսրայել	33	43	54	49	49	51	50	61	34	2,5	2,7	2,8	2,8	2,8	2,8	2,8	3	2,9
Լատվիա	33	38	46	44	49	57	65	68		2,5	2,5	2,7	2,7	2,8	2,9	3	3,1	
Բոտսվանա	35	60	68	71	69	68	70	61	59	2,5	2,9	3	3	3	3	3,1	3	3,3
Կամբոջա	35	42	59	74	72	78	102			2,5	2,6	2,9	3	3	3,1	3,5		
Բոտսվանա	35	60	68	71	69	68	70	61	59	2,5	2,9	3	3	3	3	3,1	3	3,3
Կամբոջա	35	42	59	74	72	78	102			2,5	2,6	2,9	3	3	3,1	3,5		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Չեխիա	35	32	27	22	22	27	18	19	14	2,5	2,4	2,2	2,2	2,2	2,4	2,2	2,2	2,2
Ճապոնիա	35	35	14	19	14	12	11	12	4	2,5	2,5	2,1	2,2	2,1	2	2,1	2,1	1,9
Ուրուգվայ	35	41	34	41	43	44	42	48	34	2,5	2,6	2,4	2,6	2,7	2,7	2,7	2,9	2,9
Ֆրանսիա	40	45	39	37	30	30	27	22	16	2,6	2,7	2,5	2,5	2,4	2,4	2,4	2,3	2,3
Քուվեյթ	40	53	42	37	37	39	32	28		2,6	2,8	2,6	2,5	2,5	2,6	2,5	2,5	
Թաիլանդ	40	32	27	46	30	27	26	24	17	2,6	2,4	2,2	2,7	2,4	2,4	2,3	2,4	2,4
Տրինիդադ և Տոբագո	43	35	39	31	40	39	38	33		2,6	2,5	2,5	2,4	2,5	2,6	2,6	2,6	
Հայաստան	44	45	68	84	106	107	102	115		2,7	2,7	3	3,1	3,5	3,5	3,5	3,8	
Բոլիվիա	44	45	35	44	49	39	44	40	50	2,7	2,7	2,4	2,7	2,8	2,6	2,7	2,7	3,1
Կոստա Ռիկա	44	43	46	58	69	68	65	58	34	2,7	2,7	2,7	2,9	3	3	3	3	2,9
Հունգարիա	44	32	42	41	69	71	68	61	41	2,7	2,4	2,6	2,6	3	3	3	3	3
Մադագասկար	44	79	84	90	92	95	84	84	73	2,7	3,1	3,1	3,2	3,3	3,4	3,3	3,4	3,5
Պանամա	44	45	42	33	35	30	32	28	18	2,7	2,7	2,6	2,4	2,4	2,4	2,5	2,5	2,4
Կատար	44	70	87	81	85					2,7	3	3,2	3,1	3,2				
ՀԱՀ	44	60	81	61	62	53	60	61	41	2,7	2,9	3,1	2,9	2,9	2,8	2,9	3	3
Կորեա Հր,	52	38	29	33	26	21	24	22	13	2,7	2,5	2,3	2,4	2,2	2,3	2,3	2,3	2,2
Մալթա	52	45	56	71	78	76	78	80	68	2,7	2,7	2,8	3	3,1	3,1	3,2	3,3	3,4
Նամիբիա	52	60	68	61	55	61	60			2,7	2,9	3	2,9	2,9	2,9	2,9		
Բելիզ	55	45	48	53	55	68	50	44	27	2,8	2,7	2,7	2,8	2,9	3	2,8	2,8	2,7
Հունաստան	56	55	48	49	55	57	53	52	41	2,8	2,8	2,7	2,8	2,9	2,9	2,8	2,9	3
Գվատեմալա	56	55	48	46	43	46	44	48	48	2,8	2,8	2,7	2,7	2,7	2,7	2,7	2,9	3,1
Ցամայկա	56	60	56	37	48	46	44	45	34	2,8	2,9	2,8	2,5	2,7	2,7	2,7	2,8	2,9
Մեքսիկա	56	60	68	74	88	92	84	71	33	2,8	2,9	3	3	3,2	3,3	3,3	3,1	2,9
Օման	56	60	48	53	55	46	53	52	27	2,8	2,9	2,7	2,8	2,9	2,7	2,8	2,9	2,7
Պերու	56	53	39	36	39	57	60	52	59	2,8	2,8	2,5	2,5	2,6	2,9	2,9	2,9	3,3
Հորդանան	62	45	63	61	62	61	53	58	48	2,9	2,7	2,9	2,9	2,9	2,9	2,8	3	3,1
Ֆիլիպիններ	62	70	81	58	55	44	59	58	54	2,9	3	3,1	2,9	2,9	2,7	2,9	3	3,2
Սլովենիա	62	79	63	74	62	71	89	93		2,9	3,1	2,9	3	2,9	3	3,3	3,5	
Ուգանդա	62	72	75	74	37	37	38	36	77	2,9	3	3	3	2,5	2,5	2,6	2,6	2,8
Լեհաստան	66	45	54	53	52	61	73	71	59	2,9	2,7	2,8	2,8	2,8	2,9	3,1	3,1	3,3
Սլովակիա	66	60	59	74	80	82	70	61	31	2,9	2,9	2,9	3	3,1	3,2	3,1	3	2,8
Արգենտինա	68	38	29	17	14	24	38	31	30	3	2,5	2,3	2,1	2,1	2,3	2,6	2,6	2,8
Մարոկո	68	76	48	49	55	76	60	48	40	3	3,1	2,7	2,8	2,9	3,1	2,9	2,9	3
Սաուդյան Արաբիա	68	72	75	71	62	46	53	45		3	3	3	3	2,9	2,7	2,8	2,8	
Թունիս	68	58	63	74	72	53	53	40	34	3	2,9	2,9	3	3	2,8	2,8	2,7	2,9
Բրազիլիա	72	79	93	110	95	103	100	104	59	3	3,1	3,3	3,5	3,3	3,5	3,5	3,6	3,3
Կոլումբիա	72	58	68	61	55	71	70	68	34	3	2,9	3	2,9	2,9	3	3,1	3,1	2,9
Մալայզիա	72	79	75	46	40	39	53	40	18	3	3,1	3	2,7	2,6	2,6	2,8	2,7	2,4
Մալի	72	60	68	61	72	78	79	80	59	3	2,9	3	2,9	3	3,1	3,2	3,3	3,3
Մավրիկի կ,	72	72	68	58	43					3	3	3	2,9	2,7				
Մոնղոլիա	72	60	75	89	92	82	92	93	67	3	2,9	3	3,2	3,3	3,2	3,4	3,5	3,3
Նիկարագուա	72	88	106	116	118	107	120	107	94	3	3,2	3,5	3,6	3,6	3,5	3,7	3,6	4

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Սվազիլենդ	72	79	75	74	62	61	73	77	41	3	3,1	3	3	2,9	2,9	3,1	3,2	3
ԿԱՀ	80	76								3,1	3,1							
Հոնդուրաս	80	88	97	99	106	90	92	82	57	3,1	3,2	3,4	3,4	3,5	3,3	3,4	3,3	3,3
Կոտ դ'Իվուար	80	60	75	108	116	103	109	93	54	3,1	2,9	3	3,5	3,6	3,5	3,6	3,5	3,2
Սենեգալ	80	93	81	81	85	92	100	113		3,1	3,2	3,1	3,1	3,2	3,3	3,5	3,7	
Շրի Լանկա	80	55	48	61	43	51	32	45	41	3,1	2,8	2,7	2,9	2,8	2,8	2,5	2,8	3
Դոմինիկյան Հ.	85	72	59	61	80	84	73	77	69	3,1	3	2,9	2,9	3,1	3,2	3,1	3,2	3,4
Գվինեա	85	101	84	84	80	61	79	61	52	3,1	3,3	3,1	3,1	3,1	2,9	3,2	3	3,2
Քենիա	85	93	87	81	80	78	84	84	59	3,1	3,2	3,2	3,1	3,1	3,1	3,3	3,4	3,3
Մավրիտանիա	85	101	127	127	123	122	127	115		3,1	3,3	3,7	3,8	3,7	3,8	3,9	3,8	
Կաբո Վերդե	89	88	97	122	126	114	109	93		3,2	3,2	3,4	3,7	3,8	3,6	3,6	3,4	
Խորվաթիա	89	108	106	110	118	117	109	107		3,2	3,4	3,5	3,5	3,6	3,7	3,6	3,6	
Գաբոն	89	97	93	84	72	71	79	90	41	3,2	3,3	3,3	3,1	3	3	3,2	3,4	3
Գայանա	92	93	97	90	88	99	89	82	77	3,2	3,2	3,4	3,2	3,2	3,4	3,3	3,3	3,6
Մոլդովա	92	105	120	90	95	99	95	86	92	3,2	3,4	3,6	3,2	3,3	3,4	3,4	3,4	3,9
Ալժիր	94	79	90	108	110	103	102	93	74	3,3	3,1	3,2	3,5	3,5	3,5	3,5	3,5	3,5
Բուրկինա Ֆասո	94	93	95	100	110	114	109	118		3,3	3,2	3,3	3,4	3,5	3,6	3,6	3,8	
Լիբանան	94	88	59	90	92	90	65	68		3,3	3,2	2,9	3,2	3,3	3,3	3	3,1	
Մակեդոնիա	94	97								3,3	3,3							
Մոզամբիկ	94	76	97	127	129	134	131	127	96	3,3	3,1	3,4	3,8	3,9	4,1	4	4,1	4,2
Ջիբուտի	99	79	97	100	95	103	84			3,3	3,1	3,4	3,4	3,3	3,5	3,3		
Գամբիա	99	79	97	100	95	107	95			3,3	3,1	3,4	3,4	3,3	3,5	3,4		
Ինդոնեզիա	99	105	114	110	85	57	60	48	69	3,3	3,4	3,6	3,5	3,1	2,9	2,9	2,9	3,4
Պակիստան	99	101	106	100	103	84	79	74	52	3,3	3,3	3,5	3,4	3,5	3,2	3,2	3,2	3,2
Պարագվայ	99	79	90	53	62	53	42	37	24	3,3	3,1	3,2	2,8	2,8	2,8	2,7	2,7	2,7
Ալբանիա	104	101	110	122	118	120	109	113	77	3,4	3,3	3,5	3,7	3,6	3,7	3,6	3,7	3,6
Ադրբեջան	104	118	139	147	147	144	144	138		3,4	3,5	4	4,2	4,2	4,3	4,7	4,8	
Բենին	104	88	63	61	72	78	73	77		3,4	3,2	2,9	2,9	3	3,1	3,1	3,2	
Բուլղարիա	104	108	95	100	110	117	109	93	74	3,4	3,4	3,3	3,4	3,5	3,7	3,6	3,5	3,5
Կամերուն	104	97	90	100	103	123	120	118	59	3,4	3,3	3,2	3,4	3,4	3,8	3,7	3,8	3,3
Եգիպտոս	104	121	120	110	103	95	106	91	85	3,4	3,6	3,6	3,5	3,4	3,4	3,6	3,5	3,7
Ղրղզստան	104	125	124	116	129	123				3,4	3,6	3,7	3,6	3,6	3,8			
Լեսոտո	104	108	104	115	106	107	117	111		3,4	3,4	3,4	3,6	3,5	3,5	3,7	3,7	
Տանզանիա	104	108	110	100	88	84	84	93	77	3,4	3,4	3,5	3,4	3,2	3,2	3,3	3,5	3,6
Չադ	113	125	120	127	129	130	131			3,4	3,6	3,6	3,8	3,9	4	4		
Ֆիջի	113	108	104	94	95	84	79	74	69	3,4	3,4	3,4	3,3	3,3	3,2	3,2	3,2	3,4
Վրաստան	113	108	114	120	116	117	126	123		3,4	3,4	3,6	3,7	3,7	3,7	3,9	4	
Գանա	113	108	84	84	80	84	95	86	59	3,4	3,4	3,1	3,1	3,1	3,2	3,4	3,4	3,3
Նիգեր	113	118	110	127	118	123	127	124		3,4	3,5	3,5	3,8	3,6	3,8	3,9	4	
Էկվադոր	118	117	106	84	72	61	68	71	54	3,5	3,5	3,5	3,1	3	2,9	3	3,1	3,2
Բանգլադեշ	119	131	132	126	125	107	102	93	77	3,5	3,7	3,8	3,8	3,8	3,5	3,5	3,5	3,6
Եթովպիա	119	121	124	110	110	107	109	104	88	3,5	3,6	3,7	3,5	3,5	3,5	3,6	3,6	3,8

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Հնդկաստան	119	121	133	127	126	123	124	121	89	3,5	3,6	3,9	3,8	3,8	3,8	3,8	3,9	3,8
Ղազախստան	119	125	130	122	135	130				3,5	3,6	3,8	3,7	4	4			
Նեպալ	119	108	110	116	95	99	117	104		3,5	3,4	3,5	3,6	3,3	3,4	3,7	3,6	
Թուրքիա	119	105	63	49	52	39	44	52	31	3,5	3,4	2,9	2,8	2,8	2,6	2,7	2,9	2,8
Վենեսուելա	119	130	114	94	95	99	95	93	41	3,5	3,7	3,6	3,3	3,3	3,4	3,4	3,5	3
Զամբիա	119	97	87	61	62	61	50	61	50	3,5	3,3	3,2	2,9	2,9	2,9	2,8	3	3,1
Չինաստան	127	121	114	100	110	107	109	107	77	3,6	3,6	3,6	3,4	3,6	3,5	3,6	3,6	3,6
Հասարակածային Գվինեա	128	140	137	144	135					3,6	3,9	3,9	4,1	4				
Հաիթի	128	136	137	139	138	134	135	133	98	3,6	3,8	3,9	4	4	4,1	4,1	4,4	4,4
Տոգո	128	125	130	127	129					3,6	3,6	3,8	3,8	3,9				
Մալավի	131	118	114	120	122	120	117	107	74	3,7	3,5	3,6	3,7	3,7	3,7	3,7	3,6	3,5
Ռուանդա	131	108	120	139	138	138	139			3,7	3,4	3,6	4	4	4,2	4,3		
Ուկրաինա	131	137	133	116	126	123	122	118	85	3,7	3,9	3,9	3,6	3,6	3,8	3,8	3,6	3,7
Եմեն	131	134	133	134	142	134	131	121	89	3,7	3,8	3,9	3,9	4,1	4,1	4	3,9	3,8
Կոնգո Հ.	135	134	127	136	135	137	137	130	92	3,7	3,8	3,7	3,9	4	4,6	4	4,1	
Ռուսաստան	135	131	127	122	110	95	106	93	69	3,7	3,7	3,7	3,7	3,5	3,4	3,6	3,5	3,4
Վիետնամ	135	137	144	148	144	145	142	135	99	3,7	3,9	4,1	4,3	4,3	4,4	4,5	4,3	4,5
Ռումինիա	138	131	124	94	95	92	95	111	77	3,8	3,7	3,7	3,3	3,3	3,3	3,4	3,7	3,6
Բոսնիա և Հերցեգովինա	139	140	141	151	155	150				3,8	3,9	4	4,4	4,7	4,7			
Նիգերիա	140	125	97	94	88	84	89	86	57	3,9	3,6	3,4	3,3	3,2	3,2	3,3	3,4	3,3
Սիերա Լեոնե	140			127	123	114	106	93	77	3,9	n/a	n/a	3,8	3,7	3,6	3,6	3,5	3,6
Գվինեա Բիսաու	142	142	141	148	147					3,9	4	4	4,3	4,2				
Սուրինամ	143	142	133	136	129	128	127	124		4	4	3,9	3,9	3,9	3,9	3,9	4	
Սիրիա	143	145	141	139	144	129	130	124		4	4,1	4	4	4,1	4	4	4	
Տաջիկստան	143	137	139	139	138	143				4	3,9	4	4	4	4,3			
Իրան	146	151	151	154	154	150	145	136		4,2	4,6	4,7	4,6	4,6	4,7	4,7	4,7	
Թուրքմենստան	146	150	148	148	150	138				4,2	4,4	4,4	4,3	4,3	4,2			
Բուրմա (Մյանմար)	148	145	145	145	144	138	139	131		4,2	4,1	4,2	4,1	4,1	4,2	4,3	4,3	
Ուզբեկստան	149	148	149	151	151	147				4,3	4,4	4,5	4,4	4,4	4,5			
Հարավսլավիայի ՖՀ	149	144								4,3	4,1							
Բելառուս	151	148	146	145	138	130	124	86	85	4,3	4,4	4,3	4,1	4,1	4	3,8	3,4	3,7
Լիբիա	151	153	153	159	158	154	148	139		4,3	4,8	4,9	4,9	4,9	4,9	4,9	4,9	
Լաոս	153	151	150	155	152	147	142	132		4,4	4,6	4,7	4,6	4,6	4,5	4,5	4,4	
Զիմբաբվե	153	147	146	136	129	130	122	115	89	4,4	4,3	4,3	3,9	3,9	4	3,8	3,8	3,8
Կուբա	155	153	152	157	158	153	147	139	100	4,5	4,8	4,8	4,8	4,9	4,9	4,9	4,9	4,9
Կորեա Հա,	156	155	155	161	161	156	150	142	101	5	5	5	5	5	5	5	5	5
Անգոլա	157			153	152	146	141	133	97				4,5	4,5	4,4	4,4	4,4	4,3
Բուրունդի	157			139	147	138	135						4	4,2	4,2	4,1		
Կոնգո ԴՀ	157			156	155	149	131	127					4,7	4,7	4,2	4,2	4,2	3,9
Իրաք	157	155	153	160	160	154	148	141			5	4,9	4,9	4,9	4,9	4,9	4,9	
Սուդան	157			134	142	138	138	127	95				3,9	4,1	4,2	4,2	4,1	4,1

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Պապուա Նոր Գվինեա			114	94	106	95	92	74				3,6	3,3	3,5	3,4	3,4	3,2	
Սամոա			56	53	52	53	44	52				2,8	2,8	2,8	2,8	2,7	2,9	
Սոմալի				158	157	150	145	137					4,8	4,8	4,7	4,7	4,7	
Քննարկվող երկրների թիվը	161	156	155	161	161	156	150	142	101	156	157	156	161	161	156	150	142	101
Գնահատված երկրների թիվը	156	155	152	153	153	148	142	135	99	156	156	153	153	153	148	142	135	98